



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

հունիսի 2018 թվականի №  
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՓԱՓԱԶՅԱՆ 118/1 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ  
ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) «Փափազյան 118/1» համատիրության նախագահի (այսուհետ՝ Համատիրության նախագահ) 2018 թվականի մարտի 19-ի դիմումը՝ Երևան քաղաքի Փափազյան 118/1 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ շենք) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները կառուցապատողի փոխարեն իրականացնելու վերաբերյալ,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2018 թվականի հունիսի 18-ի № 04-ԴԳ02/2074 գրությունը, համաձայն որի՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ դատարան) 2013 թվականի հունիսի 14-ի №ԵԱՆԴ/0040/04/13 վճռով շենքի կառուցապատող «Տոնուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչվել է սնանկ: 2016 թվականի օգոստոսի 22-ին ընկերության կողմից դատարան է ներկայացվել դիմում՝ 6 420 000 ՀՀ դրամի չափով պահանջ գրանցելու մասին, որը դատարանի 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ մերժվել է հայցային վաղեմությունը լրանալու պատճառով: 2018 թվականի մարտի 12-ին ընկերությունը կրկին դիմում է ներկայացրել դատարան, որը նույնպես մերժվել է, և ընկերությունը կառուցապատողից միացման վճարը գանձելու հնարավորություն այլևս չունի,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Սահմանել, որ՝

- 1) շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի վճարում և վճարումը հավաստող փաստաթղթերը ընկերություն ներկայացնում է Համատիրության նախագահը.
  - 2) շենքի սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման վճարի մեծությունը որոշվում է «ՏՈՆՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ընկերության միջև 2011 թվականի օգոստոսի 25-ին կնքված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման №E0100274.P պայմանագրի 2.2 կետում նշված 6 420 000 ՀՀ դրամ միացման վճարի, և սույն կետում նշված պայմանագրի կնքումից հետո շենքի կառուցապատման արդյունքում ավելացված յուրաքանչյուր բնակարանի համար 10 կՎԱ հզորությամբ միացման դեպքում՝ 138 000 ՀՀ դրամի, իսկ 14 կՎԱ հզորությամբ միացման դեպքում 204 000 ՀՀ դրամի հանրագումարով.
  - 3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 300 օրը.
  - 4) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, էլեկտրամատակարարման պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Համատիրության նախագահին օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**